ՏԵՂԵԿԱՆՔ

ԱՀ-ում 2023թ. հունվարի առաջին տասնօրյակում դիտված օդերևութաբանական պայմանների վերաբերյալ

Հունվարի 8-10-ին շրջանների զգալի մասում դիտվել են տեղումներ:

Տեղումները դիտվել են թաց ձյան և ձյան տեսքով: Տեղումների գումարային առավելագույն քանակը կազմել է Ստեփանակերտում և Մարտունիում՝ 9մմ, Մարտակերտում՝ 8մմ, Ասկերանում՝ 7մմ: Հունվարի 8-10-ին Ստեփանակերտում ձյան ծածկը կազմել է 5-6սմ, Ասկերանում՝ 1-2սմ, Մարտունիում՝ 2-9 սմ, Մարտակերտում՝ 3 սմ: Հանրապետության տարածքում 2-3 օր դիտվել է մառախուղ մինչև 500մ տեսանելիությամբ:

Օդի միջին տասնօրյակային ջերմաստիճանը Ստեփանակերտում եղել է +3.7^{0}C, նորմայից բարձր 3.8^{0}C-ով, Ասկերանում՝ +3.2^{0}C, Մարտունիում՝ +4.0^{0}C նորմայից բարձր 2.8^{0}C-ով և Մարտակերտում՝ +5.9^{0}C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 3-4-ին և 7-ին՝ +14...+17^{0}C:

Ամենացածր ջերմաստիճանը դիտվել է հունվարի 9- 10-ին ՝ -3... -6^{0}C:

Հողի մակերևույթի նվազագույն ջերմաստիճանը իջել է մինչև -2....-3^{0}C, առավելագույնը բարձրացել մինչև՝ +13...+22^{0}C:

Հունվարի առաջին տասնօրյակում քամու միջին արագությունը հասել է 2-3 մ/վրկ, պոռթկումները մինչև՝ 8-13 մ/վրկ արագությամբ:

Օդի միջին տասնօրյակային հարաբերական խոնավությունը կազմել է 56-65%: